Հովհաննես Թումանյան

Ճամփորդները

Աքլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհ տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ . դիմացի սարը խանգարում էր:

— Քուչի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետևն ի՞նչ կա,— հարցրեց վերևից բակում պառկած շանը:

— Ես էլ չգիտեմ,— պատասխանեց Քուչին:

— Հապա մինչև ե՞րբ պետք է այսպես մնանք . արի՛ գնանք մի տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին:

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՛ւ:

Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

— Վա՛հ, սա որտեղի՞ց դուրս եկավ, ա՛յ լավ նախաճաշիկ,— մտածեց աղվեսը ու վազեց:

— Բարի՛ լուս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

— Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աքլորը:

— Օ՜, ինչ լավ բան եք մտածել,— խոսեց աղվեսը:— Քանի ժամանակ է ես էլ կարգին ընկերի եմ ման գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե՜, ցած արի, որ չուշանանք:

— Ես համաձայն եմ,— ասավ աքլորը.— տես, թե ընկերս էլ համաձա՞յն է, ցած գամ՝ գնանք:

— Որտե՞ղ է ընկերդ:

— Էն թփի տակին: «Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի . Էս էլ իմ ճաշը»,— մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՜ւկ, փախավ, ո՜նց փախավ:

— Կա՛ց, աղվե՛ս ախպեր, մի վռազի, մենք էլ ենք գալի, էդպես ընկեր չի՛ լինի,— ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը: